

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ն. ԲԵԼՅԱԿՈՎ

# ՓԱՓԼԻԿԻ



891.715  
Բ-43

ՊԵՏՅԱՐԱՆ

1931

ՅԵՐԵՎԱՆ

-6 NOV 2011

891.416  
F-43

Ա. ԲԵԼՅԱԿՈՎ

ԱԿ

1007  
32602

# ՓԱՓԼԻԿԸ

Փոխ. ռուս.  
Հ. ՄԵԼԻՔ. ՓՈՐՍԱԴԱՆՅԱՆ

15.108  
CH-7

ՊԵՏՐՈՒՍ

1931

ՅԵՐԵՎԱՆ



ԽՈՏԱՅԻ


04.03.2013

2741

Ն. ԲԵԼՅԱԿՈՎ



## ՓԱՓԼԻԿԸ



Պետիրատի տպարան

Գրառ. № 6769 (թ)

Հքառ. № 1636

Պատ. № 2566

Տպ. 5.000

▽

Ծերունի Ավոն Թպուտ գյուղի հովիվն եր: Նա տեղափոխվել եր ալստեղ ուրիշ գավառից, բերելով իր բոլոր ունեցած-չունեցածը՝ սրինդը, մածնի կճուճն ու մարտկը:

Ավոյի սրինկն ու կճուճը հին ելին, շատ հին: Նըանք մնացել ելին Ավոյի հոր մահից հետո վորպես ժառանգություն, ուստի և իրենից, Ավոյից ավելի մեծ ելին, իսկ մարտկը Ավոյի շինածն եր և ամեն գարնան նորոգվում եր:

Սրինդն ու կճուճն իրարից բաժանվում ելին միայն ձմռան ամիսներին, լեռք սրինդը մի փալասի մեջ ինամ-

քով փաթաթված հանգստանում եր դարակում, իսկ կը-  
ճուճը տարին բոլոր բարեխիղճ կերպով կատարում եր իր  
պարտականությունը՝ մածնաբրդում կամ ապուր մատա-  
կարարելով Ավոլին: Ինչ վերաբերում ե մտրակին, նա-  
ամառվա չարքաշ կրանքից այնպես հայ ու մաշ եր լինում,  
վոր մի կողմն եր նետվում մինչև գարուն:

Բայց հենց վոր գարունը բացվում եր ու խոտը կա-  
նաչում, սրինգն իսկույն ժած եր իջնում դարակից, ա-  
զատվում կեղտոտ փալասի սիրալիք զրկից ու տեղափոխ-  
վում ամառանոց, ալսինքն Ավոլի թե՛ ընդարձակ, բայց  
փալասից վոչ մաքուր գրպանը, վարտեղ և ապրում եր  
մինչև խոր աշուն, իսկ մտրակը վերանորոգվում ու ան-  
միջապես գործի լեր անցնում:

Ծերունի Ավոն վաւերում եր ամբողջ զյուղի սերն ու  
համակրանքը լավ լերաժիշտ լինելու պատճառով:

Գարունը գալիս ե ահա: Հոտոր պիտի տանել արոտ:  
Գրուղխորհրդի նախագահն ուզում ե արդ առթիվ ժողով  
գումարել՝ մի քանի կարեոր հարցեր պարզելու համար:  
Բայց նրան չի հաջողում հավաքել զյուղացիներին, մա-  
սավանդ կանանց, և նա ստիպված ե լինում դիմել Ավոլի  
ոգնության: Ահա հենց այդ ժամանակ ե, վոր սրինգը  
լերկար քնից հետո տեղափոխվում ե հովվի գրպանը:

Ավոն բարձրանում ե սլրի գագաթը, նստուծ կանաչ  
խոտի վրա ու սկսում նվագել: Գյուղն իրար ե անցնում:  
Ամենից առաջ դուրս են թափվում վոտաբորիկ յերեխա-  
ները. սրանց լետեից շարժվում են տղամարդիկ տրեխ-  
ների թելերը կապելով ու չիբուխները լցնելով, ապա կա-  
նայք՝ վնրը իլիկը փռոացնելով, վնրը գուլպան գործելով  
և, վերջապես ծերունիները, վորոնք իրենց ցուպին հենված

մանր ու արագ քայլերով շաապում են այնտեղ, վորտե-  
ղից գալիս, տարածվում են քաղցր հնչունները:

Վաղուց արդեն բոլորը յրջապատել են Ավոլին, բայց  
նա վոչվարի չի նկատում: Նա տարվել ե, հոնքերը կա-  
խել, աչքերը փակել, միայն մատներն են արագ-արագ  
վաղում լետ ու առաջ, իսկ սրինգը նվագում ու նվա-  
գում ե իր լերկար ու տխուր լերգը՝ հին ու դառն ան-  
ցւով մասին:

Ամբողջ զյուղը յերկա յե, բայց ակրում ե խորին  
լուսթյուն: Մանուկները շարվել են Ավոլի դիմաց, վնրը  
նոտած, վնրը կանգնած, աչքերը նրա մատներին հառած  
ու բերանները բաց:

Տղամարդիկ չիրուխները մոռացել, հափշտակվել են  
Ավոլի նվագով, իսկ կանալք, ձեռները ծոցը գրած, «ախ  
ու «վախ» անելով որորվում են աջ ու ձախ:

Ն սխագահը, հանգամանից ոգտվելով, անցնում է  
գործի: Ժողովը բացվում ե: Շտապ քննվում ու վորշ-  
վում են մի քանի հարցեր՝ արոտաեղիների հարցը, հով-  
մի վարչատրության հարցը...և ժողովը փակվում ե, բայց  
վոչվոք տեղից չի շարժվում: Բոլորի ուշըն ու միտքը  
Ավոլի հետ են: Լսվում են բացականչություններ՝

— Ավո ջան, Ավո, մի պարի լեղանակ, պարի յե-  
ղանակ:

Այս անգամ սրինգը խոսում է այլ կերպ: Տխուր ու  
մելամաղձոտ լեղանակին հաջորդում են ուրախ, զվարթ  
հնչուններ: Բոլորի տրամադրությունը բարձրանում ե:  
Լայտառ հնչունները ամենին ել թարմացնում ու աշխու-  
ժացնում են:

Ավոն այնպես եր կապված իր սրինգի ու կճուճի հետ,

վոր աշխարհի յերեսին կարծես ել վոչ մի բան նրան հարւ-  
կավոր չեր:

Բայց վճէ, նա սաստիկ ցանկանում եր մի շուն ու-  
նենալ, և նրան իսկապես հաջողվեց դժնել սրտի ուզածը:  
Թեև գտածը մեծ բան չեր, միայն մի չնիկ, բայց Ավոլի-  
ուրախությանը չափ ու սահման չկար:

Այսու եր, Հովիվը գնում եր դեպի գետափի ուռե-  
նիները՝ զամբյուղի համար ճյուղեր կտրելու: Անտառա-  
պահի տնակի մոռով անցնելիս նրա ականջին հասավ ինչ-  
վոր խոռլ ձայն: Կարծես մեկը տնքում եր: Ավոն գիտեր,  
վոր տնակում վոչվոք չի ապրում: Այնուամենայնիվ, հե-  
տաքրքրո թյունից դրդված, մոտեցավ սանդուխքներին: Այնտեղ նրա աչքին ընկավ մի բրդի քուլա:

— Զեռնոցների համար պետք կգա, — մտածեց նա ու  
կուցավ, վոր վերցնի. բայց այդ ըստեյին բրդի քուլան,  
վոր մի փոքրիկ չնիկ եր, վնասաց ու փախավ: Ավոն  
տեսավ, վոր իրեն ցանկությունը կատարվելու լե: Նա  
կանչեց շանը: Ակզրում չնիկը չեր վստահում մոտենալը  
չեռվում կանգնած, պոչը թափ տալով՝ նայում եր Ա-  
վոյին, բայց հետո սկսեց կամաց-կամաց մոտենալ, և  
յերբ Ավոն քնքշորեն շոյեց նրա փափուկ բուրդը, չնիկը  
բարեկամաբար լիզեց նրա ձեռքերը:

Թեև շունը շատ նիհար եր, բայց յերկար ու քնքուշ  
բուրդ ուներ. Հովիվը նրա անունը դրեց Փափլիկ: Փափլիկը  
շուտով ընտելացավ իր անունին, սիրեց տիրոջը, և այդ  
որվանից սկսած Ավոն ու Փափլիկը անբաժան ելին:

Փափլիկը Ավոնի սիրո և ուշադրության առարկան երւ  
Յեզ ինչպես կարելի յեր չսիրել այդ փոքրիկ ու խելացի-  
արարածին:

Մի անգամ Ավոն դարձյալ գնաց դեպի ուռենիները:  
Շոգ որ եր: Նա հանեց վերարկուն ու նետեց թփերի  
մեջ, վոր վերադառնալիս վերցնի:  
Ճյուղերը կտրելով առաջ եր անցնում և չնկատեց. թե  
ինչպես շունը լետ մնաց: Հովիվը ուզում եր արդեն տուն  
վերադառնալ, յերբ տեսավ շունը չկա:

— Փափլիկ, Փափլիկ, — ձայն տվեց նա:

Արձագանգը թնդաց սարում, բայց շան ձայնը չլսվեց:  
Ավոն մոտեցավ թփերին. տեսավ վերարկուն ել չկա: Մի  
անգամից յերկու կորուստ... Այդ բանը նրա համար շատ  
ծանը եր: «Դարձյալ մենակ մնացի», մտածեց հովիվը  
քայլերն ուղղեց դեպի տուն: Բայց դեռ բակը չմտած՝



բաց Փափլիկի գոմոցը: Հովիվի սիրտը մխաց ուրախու-  
թյունից: Նա նաև դեռ ու դեն ու տեսավ, վոր Փափլիկը  
սանդուխքների վրա ինչ-մոր բանով ե զբաղված. յետ-յետ

ե զնուն ու ատամներով ինչ-վոր բան ե քաշ տալիս:  
Ավոն թագնվեց ու սկսեց դիտել: Շուտով ամեն ինչ պարզ-  
վեց: Տեսնելով, վոր սէրը վերաբեռն զցեց թփերի մեջ  
ու հեռացավ, խելացի կետանին վճռում ե, վոր հարկա-  
վոր ե տուն տանել: Յեվ ահա ուռենիների մոտից վերաբ-  
եռն քարշակով բերում հասցնում ե մինչև սանդուխք-  
ները, ուզում ե վեր բարձրացնի, բայց այստեղ հանդի-  
պում ե անհաջողության: Հենց այդ ժամանակ վրա յե-  
հասնում Ավոն և թագստի տեղից տեսնում, թե ինչպես  
հավատարիմ շունը ձիգ ե տալիս վերաբեռն, բայցում, քաշ-  
քըշում, վորովը թափահարում, հաջում, վնասում գոմը-  
ռում, նորից ձիգ տալիս, նորից թափ տալիս, բայց վե-  
րաբեռն կպել ե սանդուխքներին ու չի շարժվում տեղից:  
Վերջապես՝ ուժասպառ յեղած, նա ընկնում ե վերաբ-  
եռի վրա և, հուսահատված, սկսում վոռնալ կցկոուր ձայ-  
նով: Հեշտ բան եռ չի այդ ձևով կես վերստ ճանապարհ  
կտրելը:

Ավոն ձայն տվեց: Փափիկը վեր թռավ ու կայծակի  
արագությամբ նետվեց դեպի ծանոթ ձայնը, դտավ իր  
տիրոջը և չգիտեր, թե ինչպես արտահայտի ուրախու-  
թյունը: Նա թռչկոտում, վազգում եր Ավոնի շուրջը, լի-  
զում նրա ձեռքերը, յերեսը... Զգացված Ավոն գրկեց շա-  
նը ու գնաց դեպի սանդուխքները, վոր վերկարեռն ընկել ե  
մեխին, և այդ պատճառով Փափիկը չի կարողանում տե-  
ղից շարժել:

Վերջապես՝ յերկուն ել ներս մտան: Ավոն սկսեց  
ընթրիքի պատրաստություն տեսնել, իսկ Փափիկը նրա  
դիմացը նստած, անհամբեր պոչը շուտ-շուտ հատակին եր  
խփում ու տղան աչքերով հետեւում Ավոնի ձեռքերին:

Այսպես Փափիկն ապրեց Ավոնի հետ մոտ յերկու  
տարի:

Ճուտիկներ ել ունեցավ, շատ խելացի ու հավատա-  
րիմ շուն դարձավ:

Զձեռն անցավ: Գարունը յեկավ: Հոտը պիտի տանե-  
ցին արոտ: Յերեկոլան Ավոն շտկեց մտրակը, սրինգը դը-  
րեց գրպանը, ամեն ինչ կարգի բերեց ու պառկեց: Հենց  
նոր եր քուն մտել, յերբ Փափիկը մոտեցավ Ավոնին ու թա-  
թով խփեց մեջքին: Նա ուզում եր դուրս գալ սենյակից:  
Ծերունին դուռը բաց արեց, շանը բաց թողեց ու սպա-  
սում եր նրա վերադրձին, վոր նորից պառկի: Համարձ  
Փափիկը վնասալով նետվեց ներս: Նրան հետապնդում  
եր կատվի չափ մի պստիկ չնիկ: Հովիվն իսկուն դուռը  
փակեց, վոր ոտար շունը ներս չմտնի, ու տարակուսեց:

— Այ քեզ բան,— մտածում եր նա, — իմ Փափիկը  
մեծ չներից անդառ չի վախենում, ինչու այս փոքրիկ շը-  
նիկից այսպես վախեցավ.

Բայց ինքը Փափիկից ավելի շատ վախեցավ:

— Զլինի կատաղած եր, — մտածում եր նա և այդ  
միտքը ամբողջ գիշեր հանդիսաւ չեր տալիս նրան: Իսկ  
շունը մի անկունում պառկած մերթ վնասառում եր, մերթ  
շուռ գալիս, իր թաթիկին նայում:


Ավոն ել չհամբերեց:

— Փափիկ, Փափիկ, թաթիկ, ցուց տուր տեսնեմ:  
Շունը մեկնեց թաթը: Նրա վրա վերը կար: Այս  
հանգամանքը ավելի ևս փչացրեց Ավոնի տրամադրությունը:

Հովիվը թռնդ քացախով ալրեց վերը:

— Հուսանք, վոր թունը դեռ չի տարածվել արյան  
մեջ, իսկ վերքի մեջ յեղածն արդեն ալրեցի: Վոչինչ,

Փափլիկ, առ այժմ մեր գործը լավ է գնում,—ասաց նա  
ու սկսեց շոյել շան գլուխը:



Շունն ուրախացավ, կարծես հասկացավ տիրո՞ջ ա-  
սածն ու արածը:

Յերկար չի տեսում գարնանալին գիշերը: Շուտով՝  
գետի կողմից լովեցին բադերի ձախներ: Արել ծագեց:  
Դաշտերը, անտառները, մարդագետինները կանք առան,  
խնդացին:

Ել քուն կտանի՞:  
Ավոն դուրս յեկավ լրճիթից, կանգնեց սանդուխք-  
ների վրա, հիացմունքով դիտեց գարնան առավոտը, ապա  
դուրս բերեց կճուճը: Բայց ալսոր մածնաբրդուճը նրան

շատ անհամ եր թվում. գիշերվա դեպքը նրա դլուից դուրս  
չեր գալիս:

— Դեհ, գնանք, Փափլիկ,—ասաց նա ու դուրս յե-  
կավ տնից:

Նա նվազելով շրջում եր վողոցները: Գոմերում ի-  
րարանցումն սկսվեց: Կովերը, լեզները, վոչխարները դա-  
դարեցին հին ու փուռտ խոտը ծաւելուց: Սրնդի ձախնը-  
նրանց հիշեցը մարդագետնի թարու, անուշահոտ խոտը,  
դաշտերի մաքուր ողը, գետակների ու աղբյուրների սա-  
ռըն ու զուլալ ջուրը:

Մանուկները վրա հասան, գոմերի դռները բացեցին,  
և մի ակնթարթում փողոցը լցվեց ուրախ աղմուկով: Յե-  
լիխաներ, կենդանիներ, իրար հրելով, թռչկոտելով, գո-  
շելով վազում ելին դեպի այն կողմը, վորտեղից լսվում  
եր սրնդի ձախնը:



Ավոն հոտն առաջն արած՝ դանդաղ անցնում եր ու  
նվազում. իսկ Փափլիկը հպարտ-հպարտ քայլում եր տի-  
րոջ կողքից, աչքը հոտի վրա: Վայ եր, վոր կենդանինե-  
րից մեկն ու մեկը յետ մնար կամ մի կողմ փախչեր: Նա  
կայծակի արտղությանը վրա յեր հասնում, հանցափրին  
կարգի բերում ու նորից վերադառնում իր տեղը: Մի-  
խոսքով՝ նա իրեն պահում եր շատ լուրջ ու գիտակից:

Յերբ հասնում ելին արտատեղ ու հոտը ազատ թողնու և Փափլիկը կրկնապատկում եր ուշքն ու յնունդը. վոր հոտը ցիր ու ցան չլինի. Կարծես հասկանում եր, վոր ծերունի Ավոյի համար դժվար ե գես ու դեն վազվելը ե, դեկավարվելով՝ տիրոջ նվազած յեղանակներով, կատա-



րում եր այն բոլորը, ինչ հարկավոր եր: Յերբ Ավոն նըվագում եր յերկաք ու ձիգ, այդ նշանակում եր, վոր կեսոր ե, հոտը պիտի ջըել: Յերբ աշճակում եր կարճ ու կտրուկ ձահներ—հոտը պետք եր ուրիշ տեղ տանել: Յեփ, իսկապես, Ավոն ուժասպառ կլիներ, յեթե Փափլիկը չիներ, Ծերուկը շատ լավ եր հասկանում այս հանդամանքը և հաճախ մտածում եր. «Ի՞նչ կլինի իմ հալը, յեթե մենակ մնամ»...

Անցան որեր, շարաթներ, անցավ մի ամիս... Փափլիկը առողջ եր և ճշությամբ կատարում եր իր բոլոր պարտականությունները: Ավոն սիրտ առավէ Բալից յերկրորդ ամսվա ընթացքում հովիվը նկատեց, վոր շունը տըխուր ե, վոշինչ չի ուտում: Եա կանչեց շանը: Շունը մոտեցավ, բալց մեկ ել հանկարծ անողասելի ատամներով՝ բռնեց նրա ձեռքը ու ամուր սեղսեց. թեև չկծեց, բայց իր արարմունքից կարծես ամաչելով՝ վախավ մտավ փալտանոցը, թագնվեց տախտակների տակ ու սկսեց խոպոտ ձախով հաջել: Հովի սիրտը ճակեց: Պարզ եր, վոր շունը կատաղել եր: Այդ որը նա հոտը դուրս տարավ առանց Փափլիկի:

Կարծես ամաչում եր կայ իրեն հանցավոր եր զգում արտօջ առաջ: Սկզբում նա սիրալիր քսրավում եր Ավոյին, բայց մեկ ել հանկարծ անողասելի ատամներով՝ բռնեց նրա ձեռքը ու ամուր սեղսեց. թեև չկծեց, բայց իր արարմունքից կարծես ամաչելով՝ վախավ մտավ փալտանոցը, թագնվեց տախտակների տակ ու սկսեց խոպոտ ձախով հաջել: Հովի սիրտը ճակեց: Պարզ եր, վոր շունը կատաղել եր: Այդ որը նա հոտը դուրս տարավ առանց Փափլիկի:



Յերեկոյան սովորականից շուտ վերագառնալով տուն Ավոն շաապ-շտապ մատեցավ փայտատանը և ձեղքից նայեց ներս: Փափլիկը նստ ած՝ քար եր կրծում և բերանը լիքն եր փրփուրով: Հանկարծ նա վեր թավ տեղից ու

սկսեց այս ու այն կողմը նհտվել, տարորին ակ կերպով  
հաջել: Նա ահարկու յեր: Ել ճարչկար, Հարկավոր եր նրան  
գնդահարել: Ավոն դնաց հարևանի մոտ՝ հրացան բերելու,  
բայց մինչև նրա վերադառնալը՝ շունը անհետացել եր:  
Ավոն նկատեց, վոր պատի տակ ճեղք կար բացված:

---

Յերկար ժամանակ հովիվը փնտում եր շանը: Նա  
ըջեց այն բոլոր տեղերը, վորտեղ Փափլիկը կարող եր  
թագնված լինել, բայց չգտավ: Մի քանի որից հետո Ավո-  
նը լուր հասավ, վոր Փափլիկը կծուել ե յերեք հոգու՝ մի  
կնոջ և յերկու տղամարդու, վորոնցից յերկուսն արդեն  
գնացել են քաղաք բժշկելու, իսկ յերրորդը՝ մի ծերունի՝  
չեր ցանկացել գնալ: Նա հավատացյալ եր յեղել, հույսը  
աստծու վրա յեր դրել ու աղոթքով եր ուզեցել բժշկել  
կարծելով, վոր աստված չի թողնի, վոր մարդ արարածը,  
շան կծելուց մեռնի: Բայց աղոթքները, իհարկե, չփրկե-  
շին, և ծերունին հիվանդացավ: Յերբ նրան տարան հի-  
վանդանոց, արդեն ուշ եր, ել վոչ մի ոգնություն չեր կա-  
րելի հասցնել, և նա մեռավ: Մյուս յերկուսը Մոսկվայում  
բժշկելուց հետո վերագարձել և պատմում եին, թե ինչ-  
պես են այնտեղ ոգնություն հասցնում այդ հիվանդներին  
և ինչ խրատներ են տալիս: Որինակ, բժշկելուց հետո  
ամբողջ մի տարի վոչ մի վոգելից խմիչք չի կարելի գործ  
ածել, հակառակ դեպքում բժշկությունը կորցնում ե իր  
նշանակությունը:

Բժշկվածներից մեկը՝ Մարիամը՝ առհասարակ խմե-  
ռու սովորություն չուներ և նրա համար պատահ սծ դեպ-  
քում զսպվելը դժվար չեր, իսկ Սիմոնը, վոր առաջներում  
գինու շշին լավ բարեկամ եր, ամեն կերպ աշխատում եր  
կատարել բժշկի բոլոր խորհուրդները և չսալթաքել: Բայց  
նա դիմացավ միան հինգ ամիս:

Մի անգամ նրան հրավիրեցին հարսանիք: Այստեղ նա  
ել չդիմացավ ու մի բաժակ ողի խմեց, վոր ախորժակը  
բացվի, կարծելով, վոր մի բաժակը չի կարող վատ հե-  
տևանք ունենալ: Բայց հենց այդ բաժակն եր, վոր նրա  
տունը քանդեց, կարձ ժամանակից հետո նա հիվանդացավ  
և յերկար տանչվելուց հետո մեւավ:

---


Գիշերում ելի մի անգամ թփուտուժ և հանդիպեցի  
Ավոյն: Նա ինձ պատմեց այդ դեպքի մասին, վոր նրա  
վրա սաստիկ աղդել եր: Նա մտահոգված եր այս հարցով,  
թե ով եր ալստեղ մեղավոր՝ ինքը, վոր ժամանակին չվո-  
չընչացրեց շանը, թե մարդկային տգիտությունը, թուլու-  
թյունը, աստվածավախությունը:

— Իսկ ինչ յեղավ Փափլիկը՝ հարցը յես:

— Յերկար փնտաելուց հետո յես նրան գտա անսա-  
ռում, թփերի մեջ: Այսպես նիհարել եր, վոր չեր կարելի  
ճանաչել. աչքերը պղտորվել, խոր եյին գնացել, ծնոտը թու-  
լացել ու կախ եր ընկել: Իմ սիրուն Փափլիկից ել վոչինչ  
չեր մնացել: Նա չեր կարողանում բավել, այլ մի կերպ  
քաշ եր տալիս իր թուլացած մարմինը, հենվելով առաջի  
վոտների վրա: Նա դնչով բանդեց ծառի մոտ յեղած  
մամուռները, զլուխը խցկեց բանդած փոսի մեջ և թուլ

ու փոխված ձայնով վոռնաց։ Կարծես վողբուժ եր իր  
դժբախտ վիճակը։ Յես կանչեցի։ Փափլիկը մի կերպ կանգ-  
նեց առաջի վոտքերի վրա, ապա որորվեց մի վալրկան-  
ու միանգամից փովեց գետնին։

— Կորավ հավատութիմ ոգնականս ու ընկերս, — բա-  
ցականչեց Ավոն՝ ալեոր զլուխը շարժելով։



2741

ԳԻՐԵ 20 ԿՈՊ (1 Վ.)



Н. БЕЛЯКОВ

ЖУЧКА

Госиздат ССР Армения  
Эривань - 1931